



ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտական
խորհրդի 10.16.2012 թ. նիստում

24ր. N 5

Տնօրեն

[Handwritten Signature]
Ս. Ա. ԱՌԱՔԵԼՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

«ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ

«Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղ» Պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ ԵՊՀ ԻՄ) Բնական գիտությունների ֆակուլտետի մասնագիտական համակարգչային լաբորատորիայի (այսուհետ՝ Լաբորատորիա) կանոնակարգը սահմանում է նրա կազմակերպչական և մեթոդական հիմքն ու հիմնական խնդիրները, գործառույթները, կառուցվածքը, կազմը, աշխատանքի ուղղությունները, կանոնները, ինչպես նաև ԵՊՀ ԻՄ-ի այլ ստորաբաժանումների հետ փոխհարաբերությունները:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

- 1.1. Սույն կանոնակարգը մշակված է՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության, կրթության ոլորտում նորմատիվ կարգավորող փաստաթղթերի և ԵՊՀ ԻՄ-ի կանոնադրության:
- 1.2. Լաբորատորիան գործում է Բնական գիտությունների ֆակուլտետի կառուցվածքում:
- 1.3. Լաբորատորիայի աշխատանքները իրականացնում են աշխատակիցներ, որոնք ընդունվում և ազատվում են աշխատանքից ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի հրամանով՝ ըստ ՀՀ գործող աշխատանքային օրենսգրքի:
- 1.4. Լաբորատորիայի աշխատակիցների աշխատանքային պայմանները միջնորդավորված են պաշտոնի նկարագրերով և կնքված աշխատանքային պայմանագրերով:
- 1.5. Լաբորատորիան աշխատում է՝ համաձայն ԵՊՀ ԻՄ-ի տնօրենության կողմից հաստատված աշխատանքային գրաֆիկի:

- 1.6. Լաբորատորիայում դասերն անց են կացվում՝ համաձայն ԵՊՀ ԻՄ-ի տնօրինության կողմից հաստատված դասացուցակի, դասախոսի և Լաբորատորիայի աշխատակցի ներկայությամբ:
- 1.7. Դասացուցակից դուրս դասերը Լաբորատորիայում անց են կացվում միայն Լաբորատորիայի ղեկավարության հետ համաձայնեցնելուց հետո:

2. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՑԹՆԵՐԸ

Լաբորատորիայի հիմնական խնդիրները և գործառույթներն են.

- 2.1. Կազմակերպել Լաբորատորիայի գործունեությունը ֆակուլտետների ուսումնական և մեթոդական աշխատանքների՝ նախապես դեկանների կողմից հաստատված տարեկան պլանի համաձայն:
- 2.2. Ուղղորդել ուսանողներին մեթոդական և հետազոտական աշխատանքների կազմակերպման գործում՝ ապահովելով անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական սպասարկումը (անհրաժեշտ ծրագրային ապահովման ինստալյացիա, հակավիրուսային ծրագրերի թարմացում և այլն):
- 2.3. Ցուցաբերել խորհրդատվական աջակցություն ուսանողներին հետազոտական աշխատանքների կատարման ընթացքում՝ ապահովելով անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական սպասարկումը:
- 2.4. Կազմակերպել և անցկացնել ավարտական որակավորման աշխատանքների, կուրսային աշխատանքների, ռեֆերատների, ինքնուրույն աշխատանքների համակարգչային սպասարկումը:
- 2.5. Աջակցել ԵՊՀ ԻՄ-ի պրոֆեսորադասախոսական կազմի կողմից կազմվող, վերամշակվող դասագրքերի, մեթոդական, ուսումնական ձեռնարկների տեխնիկական սպասարկման աշխատանքներին:
- 2.6. Ապահովել դասախոսների և ուսանողների անհատական գրաֆիկով աշխատանքներին անհրաժեշտ ծրագրային և տեխնիկական սպասարկումը:
- 2.7. Մասնակցել ուսումնական ծրագրերի մեթոդական ապահովման համակարգման աշխատանքներին:

3. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿԱԶՄԸ

- 3.1. Լաբորատորիայի կառուցվածքը և հաստիքացուցակը, ինչպես նաև դրանց փոփոխությունները հաստատվում են ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի հրամանով:

- 3.2. Լաբորատորիայի աշխատակիցների աշխատանքի ընդունումը և զբաղեցրած պաշտոնից ազատումն իրականացվում է ԵՊՀ ԻՄ-ի տնօրենի կողմից, Բնական գիտությունների ֆակուլտետի դեկանի ներկայացմամբ:
- 3.3. Լաբորատորիայի աշխատակիցներն ընդունվում են աշխատանքի՝ ըստ իրենց պաշտոնի նկարագրի, որտեղ արտահայտվում են անհրաժեշտ մասնագիտական և անձնային հատկանիշները, նրանց իրավունքներն ու պարտականությունները:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 4.1. Կազմակերպել Լաբորատորիայի աշխատանքները՝ համաձայն տարեկան ուսումնամեթոդական պլանի:
- 4.2. Մեթոդական աջակցություն ցուցաբերել ուսանողներին ուսումնական, հետազոտական, գիտական աշխատանքների կազմակերպման գործում:
- 4.3. Աջակցել ուսուցման նորարարական մեթոդների համակարգման ու կիրառման աշխատանքներին:
- 4.4. Աջակցել ուսանողներին հանձնարարված աշխատանքների կատարմանը՝ տալով նրանց համապատասխան խորհրդատվություն:

5. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԱՅԼ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ

- 5.1. ԵՊՀ ԻՄ-ի դեկանատների, ամբիոնների և այլ ստորաբաժանումների հետ՝ արդյունավետ գործունեության և աշխատանքների կատարելագործման ուղղությամբ:
- 5.2. ԵՊՀ ԻՄ-ի իրավաբանի հետ՝ Լաբորատորիայի գործունեությանը առնչվող իրավաբանական խորհրդատվության և համապատասխան փաստաթղթերի մշակման ուղղությամբ:
- 5.3. Գրադարանի հետ՝ էլեկտրոնային գրադարանի բարելավման և համալրման ուղղությամբ:
- 5.4. Լաբորատորիան համագործակցում է ԵՊՀ ԻՄ-ի մյուս լաբորատորիաների հետ:

6. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- 6.1. Լաբորատորիայից օգտվողն իրավունք ունի.
 - Պահանջել ուսումնական և գիտական գործընթացներով նախատեսված տեխնիկայի և ծրագրային ապահովման առկայություն:

- Լաբորատորիայում անցկացնել դասեր՝ համաձայն ԵՊՀ ԻՄ-ի տնօրենության կողմից հաստատված դասացուցակի:
- Աշխատել Լաբորատորիայում դասերից ազատ ժամերին:

6.2. Լաբորատորիայից օգտվողը պարտավոր է.

- Տիրապետել համակարգչից օգտվելու հմտություններին:
- Հետևել տեխնիկայից օգտվելու անվտանգության կանոններին:
- Հետևել հիգիենայի նորմերին:
- Հետևել Լաբորատորիայից օգտվելու կանոններին (տե՛ս Հավելված):

7. ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻ ԱՇԽԱՏԱԿՑԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

7.1. Լաբորատորիայի աշխատակիցն իրավունք ունի.

- Պահանջել Լաբորատորիայից օգտվողներից 6.2 կետով սահմանված պարտականությունների կատարում:
- 6.2 կետով սահմանված պարտականությունները չկատարելու դեպքում ընդհատել ցանկացած օգտվողի կամ խմբի աշխատանքը:
- Առաջացած կոնֆլիկտային իրավիճակները լուծելու համար դիմել դասապրոցեսի համար պատասխանատու, պաշտոնով ամենաբարձր անձին (դեկան, բաժնի վարիչ):

7.2. Լաբորատորիայի աշխատակիցը պարտավոր է.

- Նախապատրաստել Լաբորատորիան դասին:
- Աշխատանքային օրվա վերջում անջատել համակարգիչները, էլեկտրական հոսանքի վահանակը:
- Ընթացիկ աշխատանքները կատարել դասապրոցեսի հետ համաձայնեցված:
- Հետևել ուսման գործընթացի հետ կապված ծրագրային ապահովման արխիվի պահպանմանը:

ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱՅԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԿԱՆՈՆՆԵՐ

1. Լաբորատորիայից կարող են օգտվել ԵՊՀ ԻՄ-ի բոլոր աշխատակիցներն ու ուսանողները:
2. Լաբորատորիայում թույլատրվում է աշխատել միայն դասախոսի և/կամ Լաբորատորիայի աշխատակցի ներկայությամբ:
3. Արգելվում է ինքնուրույն միացնել, անջատել Լաբորատորիայի էլեկտրական հոսանքի վահանակը:
4. Արգելվում է դիպչել էլեկտրական հոսանքի վահանակին և նրանից միացնել ինչ-որ սարքավորումներ:
5. Համակարգչային բլոկների և մոնիտորների միացնելը կամ անջատելն իրականացվում է Լաբորատորիայի աշխատակցի կողմից կամ նրա գիտությամբ:
6. Արգելվում է Լաբորատորիայում բարձրաձայն խոսելը, տարածքը աղտոտելը, սնվելը, ծխելը:
7. Չի թույլատրվում աշխատել այն համակարգիչների մոտ, որոնց ամբողջականությունը խախտված է (համակարգչային բլոկը բացված վիճակում է, անջատված են հոսանքի լարերը, անջատված են մկնիկի կամ ստեղնաշարի լարերը կամ մկնիկը, ստեղնաշարը բացակայում են և այլն): Աշխատանքը սկսելու պահից օգտվողը պատասխանատվություն է կրում համակարգչի ամբողջականության պահպանման համար:
8. Արգելվում է ինքնուրույն տեղափոխել կամ անջատել համակարգչի և մոնիտորի լարերը (հոսանքի լարեր, ցանցային, արտաքին սարքերի):
9. Չի թույլատրվում ինքնուրույն միացնել որևէ արտաքին սարք՝ բացառությամբ Flash-հիշողության սարքերի:
10. Չի կարելի մեխանիկական ուժ կիրառել (տրորել, ձգել) հոսանքի, ցանցային, արտաքին սարքերի լարերի վրա:
11. Չի թույլատրվում տեղաշարժել համակարգչային սեղանները, ինչպես նաև չի թույլատրվում տեղափոխել համակարգչային սարքերը (համակարգչային բլոկներ, ստեղնաշարեր, մկնիկներ, մոնիտորներ, արտաքին սարքեր) մի սեղանից մյուսին:
12. Չի թույլատրվում ինքնուրույն առանձնացնել, քանդել համակարգչային սարքերը (համակարգչային բլոկ, ստեղնաշար, մկնիկ, մոնիտոր, արտաքին սարքեր), ինչպես նաև իրականացնել վերանորոգման աշխատանքներ:
13. Դասի ընթացքում համակարգիչների աշխատանքի, ցանցի կամ ծրագրային ապահովման հետ կապված խնդիրներ առաջանալու դեպքում ուսանողները պարտավոր են անմիջապես այդ

- մասին տեղեկացնել դասախոսին, իսկ դասախոսը՝ Լաբորատորիայի աշխատակցին կա՛մ անմիջապես, կա՛մ դասից հետո, եթե առաջացած խնդիրը չի խանգարում դասապրոցեսին:
14. Դասապրոցեսից դուրս համակարգիչների աշխատանքի, ցանցի կամ ծրագրային ապահովման հետ կապված խնդիրներ առաջանալու դեպքում ուսանողները պարտավոր են անմիջապես այդ մասին տեղեկացնել Լաբորատորիայի աշխատակցին:
 15. Արգելվում է ինքնուրույն տեղադրել կամ հեռացնել որևէ ծրագիր:
 16. Չի թույլատրվում փոփոխել համակարգչի կարգավորումները, եթե դա նախատեսված չէ ուսումնական ծրագրով: Անհրաժեշտության առաջացման դեպքում կարգավորումների փոփոխությունն իրականացվում է Լաբորատորիայի աշխատակցի կողմից կամ նրա գիտությամբ:
 17. Լաբորատորիայում արգելվում են բոլոր տեսակի համակարգչային խաղերը, թե՛ դասի ընթացքում, թե՛ դասից դուրս՝ բացառությամբ ուսումնական պրոցեսում նախատեսված դեպքերի:
 18. Դասի ժամանակ չի թույլատրվում օգտվել ինտերնետից, եթե այն նախատեսված չէ ուսումնական ծրագրով:
 19. Ինտերնետից օգտվելիս արգելվում է մուտք գործել ժամանցային սոց. կայքեր (մասնավորապես, odnoklassniki.ru կայք): Թույլատրվում է օգտվել էլեկտրոնային փոստից, լրատվական, տեղեկատվական կայքերից, փնտրել և ներբեռնել ուսման գործընթացի համար անհրաժեշտ տեղեկատվություն, գրքեր, ծրագրեր:
 20. Ինտերնետից մեծ ծավալի ինֆորմացիա ներբեռնել կարելի է միայն Լաբորատորիայի աշխատակցին տեղեկացնելուց և նրա համաձայնությունը ստանալուց հետո:
 21. Չի թույլատրվում ներբեռնել խաղեր, ֆիլմեր, տեսահոլովակներ, երաժշտություն՝ բացառությամբ ուսումնական գործընթացում նախատեսված դեպքերի:
 22. Չայնային սարք միացնել թույլատրվում է միայն Լաբորատորիայի աշխատակցի հետ համաձայնեցնելուց հետո՝ բացառությամբ ուսումնական գործընթացում նախատեսված դեպքերի:

Վերոնշյալ կանոնները խախտողի մուտքը կարգելվի Լաբորատորիա: Մուտքի արգելքի ժամկետը կախված է խախտման լրջությունից, որի մասին կներկայացվի գրավոր հաշվետվություն դեկանատ: